

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԳԵՎՈՐԳ ՍԱՄՎԵԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ**

**ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք՝ քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն),  
միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական  
ապահովության իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների  
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ - 2015**

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**

**ГЕВОРГ САМВЕЛОВИЧ АРУТЮНЯН**

**ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ КАК СУБЪЕКТ  
ГРАЖДАНСКОГО ПРАВА**

**АВТОРЕФЕРАТ**

**Диссертации на соискание ученой степени кандидата  
юридических наук по специальности:**

**12.00.03 – Частное право: гражданское право: торговое (коммерческое)  
право; международное частное право; семейное право; трудовое право;  
право социального обеспечения**

**ЕРЕВАН - 2015**

Ատենախոսության թեման հաստատվել է  
Երևանի պետական համալսարանում

- Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Տ. Կ. Բարսեղյան
- Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Ա. Ա. Լուկյանցև  
իրավաբանական գիտությունների թեկնածու,  
դոցենտ Դ. Մ. Սերոբյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ. ապրիլի 10-ին՝ ժամը 14<sup>30</sup>-ին, Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. մարտի 10-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար  
իրավ. գիտությունների թեկնածու

Ա. Ա. Մանասյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном  
университете

Научный руководитель: доктор юридических наук,  
профессор Т. К. Барсегян

Официальные  
оппоненты: доктор юридических наук,  
профессор А. А. Лукьянцев

кандидат юридических наук,  
доцент Д. М. Серобян

Ведущая организация: Российско-Армянский (Славянский) университет

Защита состоится 10-го апреля 2015г. в 14<sup>30</sup> часов на заседании  
Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском  
государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных  
работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 10-го марта 2015 года.

Ученый секретарь специализированного совета,  
кандидат юридических наук

А. А. Манасян

## *Ատենախոսության ընդհանուր բնութագիրը*

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո երկրի հասարակական կյանքում տեղի ունեցած քաղաքական և սոցիալ-տնտեսական արձատական փոփոխություններն առաջացրին իրավական նոր ինստիտուտների ձևավորման, ամրագրման ու կիրառման անհրաժեշտություն, որոնց միջոցով հնարավոր կլիներ կարգավորել գույքային շրջանառության ոլորտում առաջացած տարբեր սուբյեկտների գործունեությունը: Նախկին, այսինքն՝ կոմունիստական վարչակարգի կողմից մերժված և հասարակությունից ամբողջովին օտարացված մասնավոր սեփականության ինստիտուտի լայնածավալ զարգացումը, որի սկիզբը դրվեց «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» ՀՀ օրենքով, առաջ քաշեց իրավաբանական անձանց տարբեր կազմակերպատիրական ձևերի ստեղծման անհրաժեշտություն: Այդ հիմնարար ակտի տրամաբանական շարունակությունը դարձավ «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» ՀՀ օրենքը, որում, ի թիվս այլ տնտեսական ընկերությունների և ընկերակցությունների, նախատեսվում էր նաև սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (այսուհետ՝ ՍՊԸ) կազմակերպատիրական ձևը:

Իրավաբանական անձի կազմակերպատիրական այս ձևն ունի առանձնահատուկ նշանակություն: ՀՀ տնտեսավարող տարբեր կազմակերպատիրական ձևերի համեմատությամբ ՍՊԸ-ն ունի իր ուրույն տեղը, որոշակի տարբերություններ ու առավելություններ, մանր ու միջին գործարարության ոլորտում լայնածավալ կիրառություն և անժխտելի առաջանցիկ դեր: Պատահական չէ, որ ըստ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից հրապարակված տվյալների՝ 2005 թվականից մինչև 2014 թվականի հունիսի 30-ը ներառյալ ՀՀ-ում սկզբնական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունների 95.5 (իննսունհինգ ամբողջ հինգ տասնորդական) տոկոսը կազմում են ՍՊԸ-ները: Միայն 2014 թվականի հուլիսի 1-ից մինչև 2014 թվականի հուլիսի 31-ը ընկած ժամանակահատվածում իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում սկզբնական գրանցում են ստացել թվով 291 (երկու հարյուր իննսունմեկ) ՍՊԸ-ներ և ընդամենը 8 (ութ) փակ բաժնետիրական ընկերություններ: Այսինքն՝ հիշյալ ժամանակահատվածում ՍՊԸ-ների թիվը կազմում է սկզբնական գրանցում ստացած առևտրային իրավաբանական անձանց ընդհանուր թվի 97.3 (իննսունյոթ ամբողջ երեք տասնորդական) տոկոսը:

ՀՀ օրենսդիրը ոլորտի կարգավորմանն ուղղված օրենսդրական ակտերում կատարել է որոշակի լրացումներ ու փոփոխություններ, սակայն բազմաթիվ հարաբերություններ ու հարցեր մնացել են չքննարկված և բաց, ինչով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի ընտրությունը: Կատարված աշխատանքի արդյունքում արտահայտվել են «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» գործող ՀՀ օրենքի լրացման, հստակեցման, փոփոխման և թերությունների վերացման վերաբերյալ առաջարկներ, որոնք իրենց նշանակությամբ արդիական են և օրենսդրական ամրագրում ստանալու դեպքում կնպաստեն ինչպես ՍՊԸ-ի գիտական մշակվածության

աստիճանի բարձրացմանը, այնպես էլ կամրապնդեն ընկերության դերն ու հեղինակությունը հասարակության մեջ:

Ատենախոսության շրջանակներում որպես քննության առարկա չեն ներառվել ՍՊԸ-ի ստեղծման, վերակազմակերպման ու դադարման հետ կապված հարաբերություններն ու դրանց կարգավորմանն ուղղված իրավական նորմերը՝ նկատի ունենալով, որ դրանք նույնն են բոլոր իրավաբանական անձանց համար: Բացի այդ, միայն ընկերության լուծարման վերաբերյալ հարաբերությունների հաշվառմամբ՝ կամավոր և հարկադիր ձևեր, կարելի է նկատել այդ հարաբերությունների բազմազանությունը: Դա խոսում փաստ է այն մասին, որ դրանք փակ շրջանակի հարցեր են և իրենց ծավալով կարող են առանձին ատենախոսության ուսումնասիրության առարկա դառնալ:

**Յետազոտության նպատակներն ու խնդիրները:** Աշխատանքի նպատակն է՝ ոլորտի գիտական և նորմատիվային բազայի ուսումնասիրության արդյունքում վեր հանել կազմակերպարավական այս ձևի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորմանն ուղղված օրենսդրության թերությունները և գիտականորեն հիմնավորված առաջարկներով փորձել օրենսդրական բացերի հաղթահարման ուղիներ: Այդ նպատակներին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- վերլուծել կազմակերպարավական այս ձևի ծագման տնտեսական և իրավական հիմնական պատճառները՝ վեր հանելով պատասխանատվության սահմանափակման սկզբունքի առաջացման օբյեկտիվ նախադրյալները,

- ուսումնասիրել ՍՊԸ-ի՝ որպես տնտեսության և գույքային շրջանառության մեջ ակտիվ մասնակցություն ունեցող սուբյեկտի իրավասուբյեկտության առանձնահատկությունները,

- քննության առնել ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի՝ որպես նրա տնտեսական և իրավական գործունեության նախապայմանի գործառույթներն ու կառուցվածքը, սահմանել դրա հասկացությունը,

- բացահայտել ընկերության հիմնադիր և մասնակից կատեգորիաների տարբերությունը և տալ վերջիններիս հասկացությունը,

- ուսումնասիրել ընկերության հիմնադիրների և մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, նրանց կողմից իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով առաջացող պատասխանատվության առանձնահատկությունները:

**Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը և առարկան:**

Ատենախոսության օբյեկտ են՝ ՍՊԸ-ի ծագման, զարգացման և օրենսդրական անրագրման վերաբերյալ հարցերը, դրա իրավասուբյեկտությունը, որպես ընկերության գործունեության տնտեսական և իրավական նախապայման՝ նրա կանոնադրական կապիտալը, դրա կառուցվածքը, ձևավորման փուլերը, գործառույթներն ու նշանակությունը, ընկերության հիմնադիրներն ու մասնակիցները, վերջիններիս իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության վերաբերյալ հարցերը:

Ատենախոսության առարկան են կազմել ՍՊԸ-ի՝ որպես տնտեսական ընկերության կազմակերպարավական ձևերից մեկի իրավական կարգավորման առանձնահատկությունները, մասնավորապես, զարգացող և զարգացած արտասահմանյան երկրների օրենսդրական ակտերն ու դրանց համեմատական վերլուծությունը ներպետական օրենսդրությամբ նախատեսված կարգավորման

հետ:

**Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը:**

Թեմայի գիտական մշակվածության աստիճանի ընդհանուր բնութագրում, որով էլ հիմնականում ուղղորդվում է գիտական հետազոտության ողջ ընթացքը, առաջին հերթին ներառվել են այն աշխատությունները, որոնք ստացել են հանրահայտ գիտական ճանաչում և անմիջականորեն վերաբերում են աշխատանքում բարձրացված հիմնախնդիրներին: Դրանց հեղինակներից են՝ Վ. Դ. Ավետիսյանը, Տ.Կ. Բարսեղյանը, Ա.Գ. Գոյխբարզը, Ա.Ի. Կամինկան, Ն.Ա. Մաշկինը, Ի.Բ. Նովիցկին, Գ.Ֆ. Շերշենկիչը, Դ.Ս. Չեչոտը, Կ. Պոբեդոնոսցևը, Վ.Վ. Ռոզենբերգը, Յա.Ռ. Վեբերսը, Յու.Կ. Տոլստոյը և այլոք:

Ատենախոսությամբ փորձ է կատարվել մեկ համապարփակ աշխատանքի շրջանակներում ներկայացնել ՍՊԸ-ի դերը ՀՀ տնտեսության մեջ: Համակողմանի քննարկման արդյունքում վեր են հանվել կազմակերպահրավավական այս ձևի ծագման, զարգացման և օրենսդրական ամրագրման հիմնական փուլերը, ուսումնասիրվել է ընկերության իրավասուբյեկտությունը, որպես ՍՊԸ-ի գործունեության տնտեսական և իրավական նախապայման՝ քննության է առնվել նրա կանոնադրական կապիտալն ու վերջինիս գործառույթները, ընկերության հիմնադիրների և մասնակիցների իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության վերաբերյալ մի շարք հարցեր:

Հետազոտության տեսական հիմքն են կազմել Ս.Ի. Ասկնազիի, Տ.Կ. Բարսեղյանի, Ֆ. Բրոդելի, Յու. Երշովայի, Ս. Ժամենի, Ե.Ա. Իգնատովայի, Լ. Լակուրի, Ն.Ա. Լիտնևայի, Վ.Պ. Կամիշենսկիի, Տ.Վ. Կաշանինայի, Ն.Վ. Կոզլովայի, Օ.Ա. Կրասավչիկովի, Մ.Վ. Կրոտովի, Մ.Ի. Կուլագինի, Ս.Դ. Մոզիլևսկիի, Բ.Ա. Պոդխուլզինի, Ե.Վ. Սերգեևայի, Ա.Ա. Սլուզինի, Ե.Ա. Սուխանովի և այլոց աշխատանքներում տեղ գտած գաղափարները:

**Հետազոտության իրավական և փորձառական հիմքը:**

Աշխատանքի նորմատիվային հիմքը կազմել են ՀՀ Սահմանադրությունը, 1929 թվականի ՀՍԽՅ քաղաքացիական օրենսգիրքը, 1964 թվականի ՀՍՍՀ քաղաքացիական օրենսգիրքը, ՀՀ Գերագույն Խորհրդի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» ՀՀ օրենքը, «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ գործող քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք), «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը և ոլորտի իրավական կարգավորմանը նվիրված այլ ակտեր:

Աշխատանքի փորձառական հիմք են կազմել ատենախոսության շրջանակներում քննարկված խնդիրներից մի քանիսի շուրջ ՀՀ վճռաբեկ դատարանի և արտասահմանյան դատարանների նախադեպային բնույթ կրող որոշումները և դրանց կապակցությամբ ներկայացված պարզաբանումները:

**Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը և հատուկ մեթոդներն ու եղանակները:**

Ատենախոսության մեջ օգտագործվել են գիտական ուսումնասիրության ինչպես ընդհանուր (դիալեկտիկական, տրամաբանական, վերլուծական), այնպես էլ համակարգակառուցվածքային, համեմատական,

դրկտրինալ մեկնաբանման և այլ մեթոդները, որոնց գործադրման արդյունքում վերլուծվել են ՀՀ, ինչպես նաև օտարերկրյա պետություններում գործող ՄՊԸ-ների իրավակարգավորմանն ուղղված օրենսդրությունները, վեր են հանվել կազմակերպահրավական այս ձևի հետ կապված գործնական խնդիրներն ու կատարվել են դրանց լուծման կապակցությամբ առաջարկներ:

**Հետազոտության գիտական նորույթ:** ՄՊԸ-ն, որպես առևտրային իրավաբանական անձի կազմակերպահրավական ձևերից մեկը, հայրենական քաղաքացիական իրավունքի գիտության մեջ ատենախոսության մակարդակով առաջին անգամ է ենթարկվել համապարփակ ուսումնասիրության: Արդյունքում կատարվել են տեսական վերլուծություններ, վեր են հանվել ընկերության հետ կապված հարաբերությունների կարգավորմանն ուղղված օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի բացթողումներն ու թերությունները և ներկայացվել են ՀՀ քաղաքացիական օրենսդրության կատարելագործմանն ուղղված նոր դրույթներ, որոնք ուղղակիորեն արտացոլվում են սույն աշխատանքի շրջանակներում ձևավորված և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներում:

**Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներ:** Կատարված հետազոտության շրջանակներում ձևավորվել են պաշտպանության ներկայացվող հետևյալ հիմնական դրույթները:

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առևտրային կազմակերպությունները կարող են ունենալ օրենքով չարգելված գործունեության ցանկացած տեսակներ իրականացնելու համար անհրաժեշտ քաղաքացիական իրավունքներ ու կրել քաղաքացիական պարտականություններ: Դրա հետ մեկտեղ նշված հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ իրավաբանական անձը կարող է ունենալ իր հիմնադիր փաստաթղթով նախատեսված գործունեության **«նպատակներին»** համապատասխան քաղաքացիական իրավունքներ ու կրել այդ գործունեության հետ կապված պարտականություններ, սակայն չի մեկնաբանում **«գործունեության առարկա»** հասկացության բովանդակությունը:

Առևտրային կազմակերպությունների **նպատակը** շահույթ ստանալն է, բայց ոչ երբեք գործունեության առարկան: Ինչ վերաբերում է **գործունեության առարկային**, ապա դա օրենքով թույլատրվող և ընկերության կանոնադրությամբ սահմանված գործունեության այն կոնկրետ **տեսակն** է, որի իրականացման արդյունքում ընկերությունը հասնում է իր ստեղծման **նպատակին**, այսինքն՝ շահույթ ստանալուն: Գործունեության կոնկրետ տեսակով զբաղվելու համար ստեղծվելուց հետո առևտրային իրավաբանական անձը կարող է ունենալ միայն այդ գործունեության իրականացման համար անհրաժեշտ քաղաքացիական իրավունքներ և կրել դրանց համապատասխան պարտականություններ:

Այս առումով առաջանում է իրավաբանական անձի հատուկ իրավունակության բովանդակության հստակեցման անհրաժեշտություն:

Ելնելով վերոգրյալից և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի հստակեցման նկատառումից՝ առաջարկել ենք, որ Օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին մասը լրացվի և շարադրվի հետևյալ կերպ.

***«Իրավաբանական անձը կարող է ունենալ իր հիմնադիր փաստաթղթով նախատեսված գործունեության «առարկային» ու նպատակներին համապատասխան քաղաքացիական իրավունքներ ու կրել այդ գործունեության հետ կապված պարտականություններ»:***

2. Ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, այնպես էլ «Սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը մի շարք հոդվածներում անդրադառնում են ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի իրավակարգավորմանը: Նշված ակտերով կարգավորվում են կանոնադրական կապիտալի չափի, դրանում ավանդների ներդրման կարգի, կանոնադրական կապիտալում ընկերության մասնակցի բաժնեմասի չափի, կանոնադրական կապիտալի ավելացման, նվազեցման և մի շարք այլ իրավահարաբերություններ: Դրա հետ մեկտեղ նշված ակտերից և ոչ մեկը չեն սահմանում դրա հասկացությունը: ՍՊԸ-ի «կանոնադրական կապիտալ» հասկացության պաշտոնական սահմանման բացակայության պայմաններում նշված հասկացությունը իրավաբանական գրականության մեջ կարող է միատեսակ չմեկնաբանվել և թյուրըմբռնումների պատճառ դառնալ: Այդ առթիվ ուսումնասիրելով կանոնադրական կապիտալի առանձնահատկություններն ու հիմք ընդունելով դրա հիմնական գործառույթները՝ ատենախոսության մեջ առաջարկվել է «կանոնադրական կապիտալ» հասկացության սահմանումը, որը կարող է ձևակերպվել «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածում հետևյալ կերպ.

***«ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալը՝ դրամական փոխարժեքով արտահայտված, կանոնադրությամբ նախատեսված չափերով մասերի բաժանված, Ընկերության գույքի այն նվազագույն չափն է, որն ապահովում է Ընկերության նախնական մեկնարկային գործունեությունը, երաշխավորում է Ընկերության պարտատերերի շահերի պաշտպանությունը, որոշում է կազմակերպության հիմնադիրների (մասնակիցների) բաժնեմասերն ու սահմանափակում նրանց պատասխանատվությունն Ընկերության պարտավորություններով:***

3. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընկերության կանոնադրական կապիտալում որպես ավանդ կարող են ներդրվել դրամ, արժեթղթեր, այլ գույք կամ գույքային իրավունքներ, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներ: Միևնույն ժամանակ, Օրենքը ոչ դրամական ավանդի դրամական գնահատման գործում անկախ գնահատողի մասնակցությունը նախատեսում է միայն այն դեպքում, երբ ոչ դրամական ավանդի դրամական արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի 500-ապատիկը:

ՍՊԸ-ի դեպքում ոչ դրամական ավանդների դրամական գնահատումը արդիական խնդիր է, քանի որ նշված հարաբերությունների կարգավորմանն ուղղված ներկայիս օրենսդրական պահանջները հանգեցնում են նրան, որ կանոնադրական կապիտալի փաստացի չափը շատ դեպքերում կարող է չհամապատասխանել դրա համար հայտարարված արժեքին: Եթե կանոնադրական կապիտալում ներդրվող ոչ դրամական ավանդների դրամական գնահատումը անկախ դրա չափից իրականացվի անկախ գնահատողի կողմից, ապա դա կարող է էական ազդեցություն ունենալ վերը հիշատակված խնդիրը լուծելու համար՝ կանխարգելելով Ընկերության հիմնադիրների (մասնակիցների) կողմից ոչ դրամական ավանդներն առավել բարձր ու չհիմնավորված արժեքով գնահատելու ռիսկը: Դեռ ավելին, այդպիսի կարգավորում նախատեսելու դեպքում կարելի է ապահովել կանոնադրական կապիտալի օրենսդրորեն ամրագրված հիմնական գործառույթներից մեկի, այն է՝ պարտատերերի շահերի երաշխավորման իրականացումը, ինչի կապակցությամբ առաջարկել ենք «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի

29-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունը խմբագրել ու շարադրել հետևյալ կերպ.

**«Ընկերության հիմնադրի (մասնակցի) կամ երրորդ անձանց ոչ դրամային ավանդով վճարվող բաժնեմասի անվանական արժեքը պետք է գնահատվի անկախ գնահատողի (աուդիտի) կողմից:**

4. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում անկախ գնահատողի և հիմնադրի (մասնակցի) պատասխանատվությունն այն դեպքերում, երբ վերջիններս, թույլ տալով իրենց վերապահված իրավունքների սահմանանցում, կատարում են ոչ դրամական ավանդի առավել մեծ ու չհիմնավորված գնահատում, քան այն իրականում արժե: Պարտատերերի շահերը առավելագույնս երաշխավորելու նպատակով առաջարկել ենք «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասում ավելացնել երրորդ պարբերություն, որը մեր պատկերացմամբ կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

**«Ընկերության կանոնադրական կապիտալը ոչ դրամական ավանդներով վճարելու դեպքում անկախ գնահատողը և հիմնադիրը (հիմնադիրները) (մասնակիցներ) ընկերության գույքի անբավարարության դեպքում նրա պարտավորություններով կրում են համապարտ պատասխանատվություն ավանդի արժեքի ավել գնահատված մասի սահմաններում մեկ տարվա ընթացքում՝ սկսած ընկերության պետական գրանցման պահից, ինչպես նաև ընկերության գործունեության ընթացքում նրա կանոնադրական մեջ կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը պետական գրանցման ենթարկելու պահից»:**

5. Ուսումնասիրելով ՍՊԸ-ի «հիմնադիր» և «մասնակից» կատեգորիաների իրավական կարգավիճակը՝ կարելի է ասել, որ «մասնակից» հասկացությունն ընդգրկում է բոլոր այն անձանց, ովքեր ընկերության պետական գրանցումից հետո նրա կանոնադրական կապիտալում բաժնեմաս ունեն: Այլ կերպ ասած՝ արդեն իսկ ստեղծված ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեցող անձանց հիմնադիր-մասնակիցների և ուղղակի մասնակիցների դասակարգելն իմաստ չունի, քանի որ վերջիններիս իրավունքներն ու պարտականություններն ամբողջությամբ նույնն են, և նման բաժանումը որևէ իրավաբանական նշանակություն չունի: Այստեղ կանգ ենք առել «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի վրա, որով սահմանվում է, որ ընկերության մասնակից են համարվում ընկերության պետական գրանցման պահից կանոնադրական կապիտալում բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձինք: Նույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընկերության հիմնադիրների (մասնակիցների) ավանդները, դրանց հաշվին ստեղծված, ինչպես նաև ընկերության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքն ընկերությանն են պատկանում սեփականության իրավունքով: Նշված դրույթը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից, այսինքն՝ վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերը որպես ընկերության կանոնադրական կապիտալի սեփականատեր ճանաչում են հենց ընկերությանը: Այդ դեպքում անհասկանալի է, թե ՍՊԸ-ի մասնակցի որ սեփականության իրավունքի մասին է խոսքը, եթե ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, այնպես էլ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածներով սահմանված կարգով այդ իրավունքը կրողը հանդիսանում է ընկերությունը: Այստեղից գալիս ենք հետևության, որ



«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասում չպատճառաբանված և անհիմն կերպով փոխվում է ընկերության կանոնադրական կապիտալի կամ դրա մասի (բաժնեմասի) նկատմամբ սեփականության իրավունքը կրող սուբյեկտը: Վերոգրյալի հիման վրա և նշված թերությունը վերացնելու նպատակով առաջարկել ենք, որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը խմբագրվեն և շարադրվեն հետևյալ կերպ.

*«ՄՊԸ-ի հիմնադիրն (հիմնադիրները) այն անձն է (անձինք են), ով (ուրքեր) որոշում է (են) ընդունել Ընկերություն հիմնադրելու մասին կամ կնքել է (են) հիմնադրման պայմանագիրն ու հաստատել նրա կանոնադրությունը, իսկ ՄՊԸ-ի մասնակիցը (մասնակիցները)՝ Ընկերության կանոնադրական կապիտալում իր (իրենց) բաժնեմասին (բաժնեմասերին) համապատասխան Ընկերության գործերի կառավարմանը մասնակցելու, շահույթից բաժնեմաս ստանալու, Ընկերության լուծարումից հետո ավելացած գույքից բաժնեմաս ստանալու, ինչպես նաև Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ ունեցող անձն է (անձինք են), այդ թվում՝ Ընկերության պետական գրանցումից հետո կանոնադրական կապիտալում բաժնեմաս ունեցող հիմնադիրը (հիմնադիրները)»:*

6. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածը կարգավորում է ընկերության կանոնադրական կապիտալում հիմնադիրների (մասնակիցների) ավանդների ներդրման կարգի հետ կապված հարաբերությունները, սակայն պատասխանատվություն նախատեսող որևէ նորմ չի պարունակում այն դեպքերի համար, երբ մասնակիցը (մասնակիցները) կամ հիմնադիրը (հիմնադիրները) խախտում են «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով իրենց ներկայացվող՝ ավանդի ներդրման պարտականությունը: Խնդրի լուծումը թողնելով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի վրա, որի համաձայն՝ ընկերության մասնակիցը (մասնակիցները), որը (որոնք) գումարային առումով տնօրինում է (են) ընկերության առնվազն 10 տոկոս բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել ընկերության այլ մասնակցի հեռացումն ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում ընկերության բնականոն գործունեությունը, կարելի է ասել, որ ավանդի ներդրման պարտականությունը չկատարելու դեպքում ընկերությունից հեռացումը կարող է անցանկալի լինել միայն այն հիմնադրի (մասնակցի) համար, ով շահագրգռված է և ունի հետաքրքիր է Ընկերությունում իր հետագա մասնակցությունը: Մինչդեռ, ակնհայտորեն մեծ չէ այն հիմնադրի (մասնակցի) հետաքրքրվածությունն ընկերության հետագա ճակատագրով, ով չի կատարում կանոնադրական կապիտալում ավանդի ներդրման իր պարտականությունը: Դեռ ավելին, եթե նման հիմնադրին (մասնակցին) հեռացնելը դիտարկվի որպես նրա կողմից թույլ տրված իրավախախտման համար պատասխանատվության միջոց, ապա կարելի է նկատել, որ իրականում վերջինիս համար որևէ անցանկալի հետևանք չի առաջանում, քանի որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը, որով կարգավորվում են ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու կամ հեռացվելու հետ կապված հաշվարկները, սահմանում է, որ ընկերությունը պարտավոր է այդ մասնակցին վճարել բաժնեմասի (կանոնադրական կապիտալում նրա ավանդի ոչ

լրիվ վճարման դեպքում՝ վճարված մասի համապատասխան բաժնենմասի) արժեքը (Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մաս): Մեր կարծիքով ավանդի ներդրման պարտականության կատարմանը կարող է խթանել ոչ թե օրենսդրորեն մասնակցին ընկերությունից հեռացնելու նորմ սահմանելը, երբ վերջինս չի կատարում կամ մասնակի է կատարում ավանդի ներդրման պարտականությունը, այլ այնպիսի նորմի սահմանումը, որով հիմնադիրը (մասնակիցը), ով չի կատարել ավանդի ներդրման պարտականությունը պարտավոր կլինի ընկերությանը վճարել տուժանքներ չվճարված ավանդի կամ դրա մասի արժեքի սահմաններում: Բարձրացված խնդիրը լուծելու նպատակով առաջարկել ենք «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով ամրագրել հիմնադրի (մասնակցի) համար տուժանքի (տուգանքի) վճարման պարտականություն, որը մեր կարծիքով պետք է արտացոլվի Օրենքի 30-րդ հոդվածում լրացուցիչ կետով հետևյալ կերպ.

**«Ընկերության հիմնադիրը (հիմնադիրները) կամ մասնակիցը (մասնակիցները) պարտավոր են ընկերության հիմնադրման մասին պայմանագրով կամ կանոնադրությամբ որոշված չափով ընկերությանը վճարել տուժանք՝ ավանդի ներդրման պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում չվճարված ավանդի արժեքի սահմաններում»:**

**Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:**

Ատենախոսությունում համակողմանի քննարկման է ենթարկվել ՍՊԸ-ի ծագման, զարգացման և օրենսդրական ամրագրման պատմությունը, վերլուծության են ենթարկվել կազմակերպարավական այս ձևի իրավասուբյեկտության հետ կապված հարցերը, տրվել է կանոնադրական կապիտալի՝ որպես ՍՊԸ-ի գործունեության տնտեսական և իրավական նախապայմանի հասկացությունը՝ բացահայտելով դրա կառուցվածքը, ձևավորման փուլերը, գործառույթներն ու նշանակությունը: Աշխատանքում ուսումնասիրության է ենթարկվել ՍՊԸ-ի հիմնադիրների և մասնակիցների իրավական կարգավիճակը, որի արդյունքում փորձ է կատարվել տալ վերջիններիս հասկացությունը, քննարկվել են հիմնադիրների և մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները և նրանց պատասխանատվության հետ կապված հարցերը պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում: Հետազոտության արդյունքում կատարվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի որոշակի հոդվածների փոփոխմանը, լրացմանն ու կատարելագործմանն ուղղված առաջարկներ, որոնք կարող են տեսական նշանակություն ունենալ կազմակերպարավական այս ձևի հետագա գիտական ուսումնասիրությունների ընթացքում:

Ատենախոսության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ դրանում կատարված վերլուծությունների արդյունքում ստացված եզրահանգումները կարող են օգտագործվել իրավաստեղծ գործունեության բնագավառում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի դրույթների կատարելագործման համար: Բացի այդ, աշխատանքը կարող է օգտագործվել նաև մեթոդաբանական, գիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդման համար անհրաժեշտ գրականություն պատրաստելու նպատակով:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը:** Ատենախոսությունը

պատրաստվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում: Հիմնական դրույթներն արտացոլվել են 2012-2014 թթ. հրատարակված գիտական չորս հոդվածներում:

**Աշխատանքի կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, ութ պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված նորմատիվ ակտերի, գրականության, դատական պրակտիկայի և վիճակագրական տվյալների ցանկից:

### ***ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ***

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, թեմայի մշակվածության աստիճանը, դրա տեսական, իրավական և փորձառական հիմքերը, ցույց են տրվել ուսումնասիրության մեթոդաբանությունը, գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, անդրադարձ է կատարվել հետազոտության արդյունքների փորձարկմանը, աշխատանքի կառուցվածքին ու ծավալին:

Աշխատանքի առաջին գլուխը, որի վերտառությունն է ***«Սահմանափակ պատասխանատվությանը ընկերությունները քաղաքացիական իրավահարաբերություններում»***, բաղկացած է երկու պարագրաֆներից:

***«Սահմանափակ պատասխանատվությանը ընկերության ծագումը, զարգացումը և օրենսդրական ամրագրումը»*** վերտառությամբ առաջին պարագրաֆում ուսումնասիրվել են իրավաբանական անձանց նախատիպերն ու վեր են հանվել պատմական տարբեր ժամանակաշրջաններում իրավաբանական անձանց տարբեր կազմակերպահրավական ձևերի ստեղծման տնտեսական և իրավական պատճառները: Արդյունքում կատարվել է այն եզրահանգումը, որ ՍՊԸ-ն առաջացել է արդեն իսկ գոյություն ունեցող իրավաբանական անձանց հատկանիշների համադրման կամ, այլ կերպ ասած՝ միաձուլման արդյունքում: Ուսումնասիրության է ենթարկվել արտասահմանյան երկրներում և ՀՀ-ում ՍՊԸ-ի օրենսդրական ամրագրման պատմությունն ու զարգացումը: Իրավաբանական անձանց կազմակերպահրավական տարբեր ձևերի պատմական զարգացման ուսումնասիրությամբ բացահայտվել են ՍՊԸ-ի հիմնական առանձնահատկություններից մեկի՝ հիմնադիրների (մասնակիցների) պատասխանատվության սահմանափակման սկզբունքի առաջացման օբյեկտիվ նախադրյալները:

***«Սահմանափակ պատասխանատվությանը ընկերության իրավասուբյեկտությունը»*** վերտառությամբ երկրորդ պարագրաֆը նվիրված է ՍՊԸ-ի որպես քաղաքացիական իրավունքի ինքնուրույն սուբյեկտի իրավասուբյեկտության բաղադրիչների՝ իրավունակության և գործունակության ուսումնասիրությանը: ՍՊԸ-ի իրավունակության բնույթի հստակեցման նպատակով իրավաբանական գրականության մեջ առկա տեսակետների և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ և 52-րդ հոդվածների վերլուծության արդյունքում, մասնավորապես՝ քննարկելով օրենսդրի կողմից օգտագործվող՝ «գործունեության նպատակ», «գործունեության տեսակ» հասկացությունները, կատարվել է այն եզրահանգումը, որ ՍՊԸ-ի, որպես առևտրային իրավաբանական անձի մասնակցությունը քաղաքացիական իրավահարաբերություններին որոշակիորեն սահմանափակ է, այսինքն՝ ունի ընդգծված սահմաններ, որոնք էլ կանխորոշում են նրա իրավունակության հատուկ

բնույթը: Այդ առումով ներկայացվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կատարելագործմանն ուղղված առաջարկ: Պարագրաֆի շրջանակներում կատարված ուսումնասիրությունները բերել են այն հետևությանը, որ հատուկ բնույթի է նաև ՍՊԸ-ի գործունակությունը:

Երկրորդ գլուխը, որը ստացել է՝ **«Կանոնադրական կապիտալը որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործունեության տնտեսական և իրավական նախապայման»** վերտառությունը, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Առաջին պարագրաֆում՝ **«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի գործառույթներն ու նշանակությունը»**, մանրամասն քննարկվել են ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի հիմնական գործառույթները՝ մեկնարկային, երաշխիքային և մասնակցության: Դիտարկելով ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի նշանակությունը հեղինակը հնարավոր է համարել ընկերության հիմնադիրների (մասնակիցների) պատասխանատվության սահմանափակումը առանձնացնել որպես կազմակերպարարական այս ձևին բնորոշ՝ ինքնուրույն և հիմնական գործառույթ: Հիմք ընդունելով ընկերության կանոնադրական կապիտալի գործառույթներն ու նշանակությունը, համեմատելով արտասահմանյան երկրներում և ՀՀ-ում ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի նվազագույն չափի կապակցությամբ օրենսդրական պահանջները և հաշվի առնելով Ընկերության հնարավոր պարտատերերի շահերն առավելագույնս երաշխավորելու անհրաժեշտությունը, առաջարկվել է հայրենական օրենսդրությամբ վերականգնել կանոնադրական կապիտալի նվազագույն չափի պահանջը, ինչի արդյունքում կարելի կլինի կյանքի կոչել կանոնադրական կապիտալի կարևորագույն գործառույթներից՝ մեկնարկայինն ու երաշխիքայինը: Դեռ ավելին, կանոնադրական կապիտալի նվազագույն չափի օրենսդրական պահանջ նախատեսելու դեպքում ՀՀ-ում կկանխվի այսպես կոչված մեկ օրական Ընկերությունների ստեղծման հնարավորությունը:

Երկրորդ պարագրաֆը ստացել է՝ **«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի հասկացությունը, բաժնեմասերն ընկերության կանոնադրական կապիտալում և դրանց կառուցվածքը»** վերտառությունը: Ներպետական քաղաքացիական օրենսդրությամբ, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը մի շարք հոդվածներով անդրադառնում են կանոնադրական կապիտալի և դրա հետ կապված հարաբերությունների կարգավորմանը, սակայն նշված ակտերից և ոչ մեկը չեն սահմանում դրա հասկացությունը: «Կանոնադրական կապիտալ» հասկացության պաշտոնական սահմանման բացակայության պայմաններում նպատակ ունենալով կանխել այդ հասկացության հետ կապված թյուրըմբռնումների առաջացման հնարավորությունը, որպիսիք ստեղծվել են, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում, ուսումնասիրվել են այդ հասկացության վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ առկա տեսակետները: Հիմնվելով սույն գլխի նախորդ պարագրաֆում քննության առնված՝ կանոնադրական կապիտալի գործառույթների և նշանակության վրա, օրենսդրական բացը լրացնելու նպատակով առաջարկվել է **«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին»** ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանել ՍՊԸ-ի «կանոնադրական կապիտալ» հասկացությունը: Արդյունքում ատենախոսը հանգում է նրան, որ խոսելով ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի կառուցվածքի

մասին պետք է նկատի ունենալ ոչ թե դրանում ընկերության հիմնադիրների ներդրումները (նշված հարաբերությունը իրավաբանական գրականության մեջ մեկնաբանվում է որպես հիմնադիրների կողմից ընկերության կանոնադրական կապիտալում դրամական կամ ոչ դրամական ավանդների ներդրման գործընթաց), այլ կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի հանրագումարը: ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում մասնակցի բաժնեմասի հասկացության և իրավական բնույթի մասին գոյություն ունեցող տարբեր մոտեցումները քննարկելու միջոցով կատարվել է այն եզրահանգումը, որ բաժնեմասը քաղաքացիական իրավունքի առանձնահատուկ օբյեկտ է, որն ամբողջությամբ չի մտնում ոչ առարկաների, այդ թվում դրամի և արժեթղթերի, այլ գույքի կամ գույքային իրավունքների մեջ, և ոչ էլ ոչ նյութական բարիքների մեջ: ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնեմասն ունի այնպիսի հատկություններ, որոնք ընդհանրական նշանակություն ունեն քաղաքացիական իրավունքի բոլոր օբյեկտների համար և ապահովում է համապատասխան իրավունքը կրող սուբյեկտի (սուբյեկտների) նյութական և ոչ նյութական կարիքների բավարարման ունակությունը:

Երրորդ պարագրաֆում՝ **«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի ձևավորման փուլերը»**, ուսումնասիրվել է ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի ձևավորման գործընթացը, դրա առանձին փուլերը: Վերլուծելով հիշյալ գործընթացի իրավական կարգավորումը, մասնավորապես, քննության առնելով ոչ դրամական ավանդների վճարման ճանապարհով կանոնադրական կապիտալ ստեղծելու օրենսդրական հնարավորությունը և նպատակ ունենալով ապահովել այդ ճանապարհով ստեղծված կանոնադրական կապիտալի իրական արժեքը, ատենախոսը ներկայացրել է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի լրացման առաջարկ: Բացի այդ, պարագրաֆի շրջանակներում կատարված՝ արտասահմանյան երկրների և ՀՀ օրենսդրությունների համեմատական վերլուծությունների արդյունքում, հետամուտ լինելով կանոնադրական կապիտալի երաշխիքային գործառույթի նշանակության և ՍՊԸ-ի հնարավոր պարտատերերի շահերի երաշխավորվածության աստիճանի բարձրացմանը, հեղինակը առաջարկել է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածում կատարել նաև մեկ այլ լրացում, նախատեսելով ընկերության հիմնադիրների (մասնակիցների) ու անկախ գնահատողի պատասխանատվությունն այն դեպքերում, երբ վերջիններս թույլ տալով իրենց վերապահված իրավունքների սահմանանցում, կատարում են ոչ դրամական ավանդների առավել բարձր ու չհիմնավորված գնահատում, քան դրանք իրականում արժեն:

Երրորդ գլուխը՝ **«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հիմնադիրներն ու մասնակիցները, նրանց իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը»** վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Առաջին պարագրաֆում՝ **«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հիմնադիրների և մասնակիցների հասկացությունը»**, ուսումնասիրվել է ընկերություն հիմնադրելու կամ դրանում մասնակցություն ձեռք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակը: Արդյունքում կատարվել է այն եզրահանգումը, որ պետական տարբեր պաշտոններ զբաղեցնող անձանց գործունեության կարգավորմանն ուղղված առանձին օրենքներով ընդամենը

սահմանափակված է վերջիններիս կողմից իրենց անմիջական գործողություններով՝ որպես ՍՊԸ-ի մասնակցի իրավունքների և պարտականությունների կատարման հնարավորությունը: Այսինքն՝ հիշյալ անձինք կարող են հիմնադրել ինչպես նոր Ընկերություն, այնպես էլ մասնակցություն ձեռք բերել արդեն իսկ գրանցված կազմակերպությունում, չնայած, որ հետագայում պարտավոր են բաժնեմասը հանձնել հավատարմագրային կառավարման: Նպատակ ունենալով սահմանել Ընկերության «հիմնադիր» և «մասնակից» հասկացությունները ուսումնասիրվել է նշված կատեգորիաների հարաբերակցությունը և կատարվել այն եզրահանգումը, որ արդեն իսկ ստեղծված Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեցող անձանց հիմնադիր-մասնակիցների և ուղղակի մասնակիցների դասակարգելն իմաստ չունի, քանի որ վերջիններիս իրավունքներն ու պարտականություններն ամբողջությամբ նույնն են, և նման բաժանումը որևէ իրավաբանական նշանակություն չունի: Քննության առնելով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը, ատենախոսը եկել է այն հետևությանը, որ դրանում Ընկերության մասնակցի հասկացության ձևակերպման մեջ անհիմն և չպատճառաբանված կերպով փոխվել է Ընկերության կանոնադրական կապիտալի նկատմամբ սեփականության իրավունք կրող սուբյեկտը: Դրա հիման վրա կատարվել է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածում տեղ գտած օրենսդրական սխալը վերացնելու և Ընկերության «հիմնադիր» և «մասնակից» հասկացությունները սահմանելու առաջարկ:

**Երկրորդ՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հիմնադիրների և մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները»** վերտառությամբ պարագրաֆում ուսումնասիրվել են Ընկերություն հիմնադրելու կապակցությամբ հիմնադիրների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև դասակարգման են ենթարկվել մասնակցի (մասնակիցների)՝ Ընկերությանը մասնակցելու հետ կապված իրավունքներն ու պարտականությունները: ՍՊԸ-ի մասնակցի օրենսդրորեն ամրագրված հիմնական և լրացուցիչ իրավունքներն ու պարտականությունները ուսումնասիրելու արդյունքում կատարվել է այն եզրահանգումը, որ Ընկերության ցանկացած մասնակից մշտապես օժտված է բոլոր հիմնական իրավունքներով, մինչդեռ լրացուցիչ իրավունքներ մասնակիցները կարող են ունենալ կամ չունենալ: Լրացուցիչ իրավունքների հստակեցման նկատառումով դրանք դասակարգվել են որպես ընդհանուրների և անհատականների, հիմքում դնելով այն հանգամանքը, որ ընդհանուր լրացուցիչ իրավունքները, այդպիսիք գոյություն ունենալու դեպքում, գոյություն ունեն բոլոր մասնակիցների համար, իսկ հակառակ դեպքում, դրանք ոչ մի մասնակցի համար գոյություն չունեն: Որպես ընդհանուր լրացուցիչ իրավունքի օրինակ ծառայել է վաճառվող բաժնեմասը (դրա մի մասը) ձեռք բերելու՝ Ընկերության բոլոր մասնակիցների նախապատվության իրավունքը, իսկ որպես անհատական լրացուցիչ իրավունքի օրինակ՝ Ընկերության մասնակիցներից մեկի կողմից տնօրենների խորհրդում ինքնուրույն մեկ կամ մի քանի անդամներ նշանակելու իրավունքը: Դրան համապատասխան ընդհանուրների և անձնականների են դասակարգվել նաև Ընկերության մասնակցի լրացուցիչ (այլ) պարտականությունները: Ընդհանուր պարտականությունները մասնակիցների ընդհանուր ժողովի միաձայն որոշմամբ կամ Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով կրում են բոլոր մասնակիցները, մինչդեռ

անձնական բնույթի պարտականություններն Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են դրվել Ըկերության մեկ կամ մի քանի մասնակիցների վրա: Ատենախոսը հնարավոր է համարել ՍՊԸ-ի մասնակիցների իրավունքները դասակարգել նաև սահմանափակների և անսահմանափակների, հիմքում դնելով այն հանգամանքը, որ իրավունքի առանձին տեսակներով օժտված են միայն այն մասնակիցները, որոնց բաժնեմասն Ընկերության կանոնադրական կապիտալում հասնում է որոշակի չափերի: Մասնավորապես խոսքը Ընկերության մասնակիցներից մեկին հեռացնելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու իրավունքի մասին է, որը «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կարող է ներկայացնել Ընկերության այն մասնակիցը (մասնակիցները), ով (ովքեր) գումարային առումով տնօրինում է Ընկերության առնվազն 10 տոկոս բաժնեմասը: Անսահմանափակների տակ հասկացվում են իրավունքի այն տեսակները, որոնցով, անկախ կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերի չափից օժտված են Ընկերության բոլոր մասնակիցները, իսկ սահմանափակների տակ, այնպիսիք, որոնք կարող են իրականացվել միայն Ընկերության կանոնադրական կապիտալում որոշակի չափերի հասնող բաժնեմասերի տիրապետող մասնակիցները: ՍՊԸ-ի մասնակիցների իրավունքները դասակարգվել են նաև դրանց մեկանգամյա կամ պարբերական բնույթի իմաստով: Նշվածներից առաջինների օրինակ են ծառայել՝ մասնակցի կողմից Ընկերությունից դուրս գալու, Ընկերության լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո ավելացած գույքից բաժնեմաս ստանալու, Ընկերությունից հեռացվելու դեպքում իր բաժնեմասի իրական արժեքը ստանալու և կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը վաճառելու կամ այլ կերպ օտարելու իրավունքները, որոնց մեկանգամյա իրականացմամբ դրանց գործողությունը սպառվում է կամ այլ կերպ ասած, դադարում է, մինչդեռ երկրորդների դեպքում մեկանգամյա գործողությունների արդյունքում իրավունքի իրականացման հնարավորությունը չի սպառվում: Այդպիսի իրավունքները տևական ժամանակահատվածում պահանջի իրավունքի հնարավորություն են ընձեռում: Օրինակ, Ընկերության գործունեությունից ստացվող շահույթից մասնաբաժին ստանալու իրավունքը, որը պարբերաբար մասնակցի համար ծագում է Ընկերության կողմից շահույթի բաշխման մասին որոշումներն ընդունելուց հետո:

Երրորդ գլուխը՝ *«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հիմնադիրների և մասնակիցների պատասխանատվությունը»* վերտառությամբ, նվիրված է Ընկերության հիմնադիրների և մասնակիցների կողմից իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում առաջացող պատասխանատվության առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Վերլուծելով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ ընկերության մասնակիցը (մասնակիցները), ով (ովքեր) գումարային առումով տնօրինում է (են) ընկերության առնվազն 10 տոկոս բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել ընկերության այլ մասնակցի հեռացումն ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում ընկերության բնականոն գործունեությունը, կատարվել է այն եզրահանգումը, որ դրանք Ընկերության մասնակցի կողմից և հիմնական և լրացուցիչ պարտավորությունները չկատարելու դեպքերն են: Ընկերության

հիմնադիրների և մասնակիցների պատասխանատվության առաջացման ասպեկտում քննության առարկա են դարձվել բարեխղճություն և ողջամտություն կատեգորիաները: Մասնակիցների ընդհանուր ժողովին չմասնակցելու հետևանքով որպես պատասխանատվության միջոց մասնակցին հեռացնելու հետ կապված օրենսդրական նորմերի, իրավակիրառ պրակտիկայի և իրավաբանական գրականության մեջ առկա տեսակետների քննարկման արդյունքում ատենախոսը եկել է եզրահանգման, որ ընդհանուր ժողովին մասնակցելը սուբյեկտիվ իրավունք է, որի իրականացումը կախված է միայն այդ իրավունքը կրող սուբյեկտի կամքից, և որ նշված իրավունքի իրականացումից հրաժարվելը, երբևէ չի կարող դիտարկվել որպես իրավունքի չարաշահում: Դեռ ավելին, եթե ժողովին չմասնակցելը դիտարկվի այնպիսի անգործություն, որի հետևանքով կարող է խաթարվել Ընկերության բնականոն գործունեությունը, ապա հեղինակի կարծիքով մասնակիցը չի մասնակցել ընդհանուր ժողովին, թե մասնակցել և դեմ է քվեարկել Ընկերության համար կենսական կարևորություն ունեցող հարցին՝ հետևանքները նույնն են: Արդյունքում կատարվել է այն հետևությունը, որ սխալ է մասնակցին պատասխանատվության ենթարկել իր իրավունքների իրականացումից հրաժարվելու համար, քանի որ իրավունքի իրականացումից հրաժարվելը սուբյեկտիվ իրավունքի մի մասն է կազմում և որ իրավունքը հենց այն կատեգորիան է, որը կանխորոշում է հնարավոր և ոչ թե պարտադիր վարքագիծ: Դրանից ելնելով կատարվել է այն հետևությանը, որ Ընկերության շահերը պաշտպանելու նպատակով մասնակցի (մասնակիցների) պատասխանատվության առաջացման հիմքում շեշտը պետք է դրվի ոչ թե նրա վարքագծի ձևի, այսինքն՝ գործողության կամ անգործության, այլ հետևանքի վրա՝ քննության առնելով այն հանգամանքը, թե մասնակցի վարքագծի ձևը որքանով է վնաս հասցնում Ընկերությանը կամ դժվարացնում նրա բնականոն գործունեությունը: Դրան համապատասխան կատարվել է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի փոփոխության առաջարկ: Ընկերության և դրա կանոնադրական կապիտալում բաժնեմասերի տիրապետող այլ մասնակիցների շահերի պաշտպանվածության աստիճանի բարձրացման նկատառումներով պարագրաֆի շրջանակներում ուսումնասիրվել են «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի այն հոդվածները, որոնցով կարգավորվում են Ընկերության կանոնադրական կապիտալում հիմնադիրների (մասնակիցների) ավանդների ներդրման հետ կապված հարաբերությունները: Արդյունքում կատարվել է այն եզրահանգումը, որ դրանք պատասխանատվության որևէ միջոց չեն նախատեսում այն դեպքերի համար, երբ հիմնադիրը (մասնակիցը) խախտում է ավանդի ներդրման պարտականությունը: Նշված խնդրի լուծման կապակցությամբ վերլուծելով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածը և քննարկելով իրավակիրառ պրակտիկան ձևավորվել է այն կարծիքը, որ որպես պատասխանատվության միջոց ավանդի վճարման պարտավորությունը չկատարած մասնակցին հեռացնելը վերջինիս համար որևէ անբարենպաստ հետևանքներ չի առաջացնում, քանի որ նույն Օրենքը, որով կարգավորվում են Ընկերության մասնակցի՝ Ընկերությունից դուրս գալու կամ հեռացվելու հետ կապված հաշվարկները, սահմանում է, որ Ընկերությունը պարտավոր է այդ մասնակցին վճարել նրա բաժնեմասի արժեքը (23-րդ հոդվածի 1-ին մաս): Այսինքն, ավանդի ներդրման պարտականության կատարմանը չի կարող խթանել մասնակցին Ընկերությունից հեռացնելու ներկայիս օրենսդրական



կարգավորումը, երբ վերջինս չի կատարում կամ մասնակի է կատարում ավանդի ներդրման պարտականությունը: Այսինքն, անհրաժեշտ է սահմանել այնպիսի նորմ, որով հիմնադիրը (մասնակիցը), ով չի կատարել ավանդի ներդրման պարտականությունը պարտավոր կլինի ընկերությանը վճարել տուժանքներ՝ չվճարված ավանդի կամ դրա մասի արժեքի սահմաններում, ինչի կապակցությամբ ատենախոսը կատարել է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի լրացման առաջարկ: Պարագրաֆի շրջանակներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ, մեկ այլ՝ ընկերության համար գաղտնիք պարունակող տեղեկությունները չհրապարակելու պարտականության խախտման դեպքում «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը պատասխանատվություն չի նախատեսում: Այսինքն, նման դեպքերում պետք է առաջնորդվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոններով, մասնավորապես՝ 17-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն՝ անձը, ունի իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով, վնասները հաշվարկելով նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, որի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ): Սակայն, գաղտնիք պարունակող տեղեկատվությունը հրապարակելու դեպքում վնասների հատուցումն այնքան էլ արդյունավետ միջոց չէ, քանի որ վնասների չափը որոշելն ու դրանք գնահատելը և առավել ևս դրանք ապացուցելը շատ բարդ է: Նշված խնդրի լուծման նպատակով առաջարկվել է, որ ընկերության կանոնադրությամբ նախատեսվի լրացուցիչ պատասխանատվություն այն մասնակցի համար, ով կխախտի ընկերության համար գաղտնիք պարունակող տեղեկատվությունը չհրապարակելու իր պարտականությունը: Ատենախոսի կարծիքով նման դեպքերում առավել արդյունավետ կլինի ընկերության կանոնադրությամբ պատասխանատվության այնպիսի ձև սահմանելը, ինչպիսին տուգանքն է, որի բռնագանձման համար վնասների չափ որոշելու և ապացուցելու անհրաժեշտություն չկա, այլ հարկավոր է ապացուցել միայն մասնակցի կողմից ընկերության համար գաղտնիք պարունակող տեղեկատվությունը հրապարակելու փաստը:

**Եզրակացության** մեջ ընդհանրացված կերպով ներկայացվել են ատենախոսության հիմնական արդյունքները:

Կազմակերպահրավական այս ձևի կարգավորմանն ուղղված օրենսդրության մեջ տեղ գտած մասնակի թերություններն ու բացթողումները վերացնելու և դրանցից բխող անցանկալի հետևանքներից խուսափելու նպատակով արտահայտվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի առանձին հոդվածների և դրույթների հստակեցման, լրացման, փոփոխման և թերությունների վերացման կապակցությամբ դիրքորոշումներ ու առաջարկներ, որոնք համահունչ են ժամանակի պահանջներին և օրենսդրական ամրագրում ստանալու դեպքում զգալիորեն կնպաստեն նշված իրավական ակտերի կատարելագործմանը:

Ատենախոսության շրջանակներում կատարված մյուս հետևությունները

կապված են ՍՊԸ-ի իրավասուբյեկտության ու դրա բնույթի, կանոնադրական կապիտալի հասկացության, դրա կառուցվածքի, ձևավորման փուլերի և նրա կատարած գործառույթների դերի ու նշանակության վերաբերյալ հարցերի, Ընկերության հիմնադիրների ու մասնակիցների, նրանց իրավունքների ու պարտականությունների բովանդակության ու բնույթի և նրանց պատասխանատվության հետ կապված հարցերի հետ:

Ընկերության իրավասուբյեկտության ուսումնասիրության արդյունքում կատարվել է այն եզրակացությունը, որ ՍՊԸ-ն օժտված է հատուկ իրավասուբյեկտությամբ, ինչի հստակեցման կապակցությամբ կատարվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան հոդվածի փոփոխության առաջարկ:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ներկայումս ՍՊԸ կարելի է ստեղծել շրջանառու ցանկացած միջոցով, ուսումնասիրելով կանոնադրական կապիտալի էությունը, իմաստը և գործառույթների նշանակության բարձրացման հնարավորությունը, կատարվել է այն եզրակացությունը, որ հայրենական օրենսդրությամբ պետք է վերականգնվի Ընկերության կանոնադրական կապիտալին ներկայացվող նվազագույն չափի պահանջը:

### **Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում**

1. Հարությունյան Գ.Ս., Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ստեղծման և օրենդրական ամրագրման մասին // «Լրաբեր» հասարակական գիտությունների, No 2-3, 2012, էջեր 79-90:
2. Գևորգ Հարությունյան, Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը քաղաքացիական իրավահարաբերություններում // «Արդարադատություն», No 1 (16), 2012, էջեր 38-44
3. Գևորգ Հարությունյան, Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի հասկացությունը և կառուցվածքը // «Արդարադատություն», No 1 (20), 2013, էջեր 37-42:
4. Գևորգ Հարությունյան, Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հիմնադիրների և մասնակիցների պատասխանատվությունը // «Արդարադատություն», No 1 (24), 2014, էջեր 53-60:

## **РЕЗЮМЕ**

### **ГЕВОРГ АРУТЮНЯН**

#### **ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ КАК СУБЪЕКТ ГРАЖДАНСКОГО ПРАВА**

Последовавшие за независимостью Республики Армения радикальные политические и социально-экономические изменения в стране привели к необходимости формирования, законодательного закрепления и введения в жизнь новых правовых институтов, которые сделали бы возможным урегулирование деятельности разных субъектов, появившихся в сфере имущественных отношений. Эта диссертация посвящена изучению одного из более распространенных участников в экономике Республики Армения субъектов - обществу с ограниченной ответственностью (ООО).

В результате анализа экономических и правовых причин происхождения этой организационно-правовой формы были выявлены объективные предпосылки появления принципа ограничения ответственности, свойственного ООО.

В качестве экономической и правовой предпосылки для деятельности общества с ограниченной ответственностью был изучен уставной капитал. Была сформулирована его концепция на основании его функций и назначения. Работа также рассматривает категории учредитель и участник, их права и обязанности, а также ответственность последних за невыполнение или ненадлежащее выполнение своих обязанностей.

Предметом диссертации являются характерные черты правового урегулирования ООО, как одной из организационно-правовых форм экономического общества. В частности, путем их сравнительного анализа с законодательными актами развивающихся и развитых стран, а также с соответствующими нормами внутри-государственного законодательства, были выдвинуты рекомендации, направленные на улучшение отечественного гражданского законодательства.

В результате работы, проделанной в рамках диссертации, автор представил предложения о внесении изменений и дополнений в гражданском законодательстве, в частности в Гражданском кодексе РА и законе "Об обществах с ограниченной ответственностью", которые будут способствовать улучшению эффективности урегулирования правовых отношений, связанных с этой организационно-правовой формой.

По нашему убеждению, исполнение представленных содержательных и редакционных изменений в соответствующих законодательных документах приведет к следующим результатам:

- более четким станет содержание правоспособности коммерческого юридического лица,

- значительным образом снизится неправильное понимание законодательных норм, направленных на урегулирование этой сферы,

- повысится гарантированность интересов кредиторов обществ с ограниченной ответственностью,

- обеспечится надлежащее исполнение своих обязанностей учредителями (участниками) этой организационно-правовой формы хозяйствования.

И что немаловажно, практическое исполнение представленных рекомендаций поможет предотвратить создание "однодневных" ООО, которые довольно распространены и по каким-то соображениям бесприпятственно возникают в экономической среде Республики Армения.

## **SUMMARY**

**GEVORG HARUTYUNYAN**

### **LIMITED LIABILITY COMPANY AS A SUBJECT OF CIVIL LAW**

Political and socio-economic sweeping changes in the Republic of Armenia following independence called for the need to create, reinforce and institutionalize new legal frameworks that would allow regulating the operation of various economic entities emerging in the area of property relations. This dissertation is dedicated to the study of limited liability companies (LLC)s, one of the most common entities in the economy of the Republic of Armenia.

The dissertation focuses on the characteristics of the regulatory framework of the LLC as an organizational and legal form of economic entity. In particular, as a result of the undertaken comparison of the related Armenian law with those of different countries as well as with other Armenian legislative acts regulating the area, we have come up with recommendations aiming to improve the Armenian civil legislation in this area.

A comprehensive analysis of the reasons behind the emergence of this form of economic and legal entity led us to the identification of the objective premises for the development of the principle of limited liability characteristic to LLC.

We have studied the charter capital as the economic and legal premise for limited liability companies and have defined it based on its functions and importance. As well, we have elaborated on the categories of founder and participant of LLC's, their rights and obligations and the liability for failing to perform or properly perform their responsibilities.

In addition to the above, as a result of the study carried out in the framework of the dissertation, the author has presented recommendations on making changes and additions to the RA Civil Law and the RA Law "On Companies with Limited Liability" as well as editing some of the norms which will improve the mentioned laws.

We believe that the recommended content-related and editorial changes in the respective legal documents will produce the following results:

- more clarity of the content of the legal capacity of the commercial legal person;
- substantially reduced possibility of misunderstanding of the legal norms aimed at the regulation of the area;
- increased level of the guaranteed interests of LLC creditors; and
- higher responsibility of founders (participants) of this form of legal entities with respect to the implementation of their duties.

Last but not least, the practical application of the related recommendations will help prevent the creation of "one-day operating" LLC's that emerge without hindrance due to dubious agendas, a practice currently common to the country's economic environment.